ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պատվիրակություն՝ Բելգիայի Թագավորություն (Բրյուսել) գործուղման արդյունքների վերաբերյալ

Անուններ, **ազգանուններ**, **զբաղեցրած պաշտոններ՝** Արդարադատության նախարարի տեղակալ Աննա Կարապետյան, Արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյան, Ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Ղազարյան, Քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Նահապետյան, ԱՆ խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող Ռուբինա Մխիթարյան, Գլխավոր դատախազի խորհրդական Քրիստինե Գաբուզյան, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության պետ Տիգրանուհի Խալաֆյան, ԱԳՆ եվրոպայի վարչության եվրոպական միության բաժնի վարիչ Լենա Թերզիկյան, ԱԳՆ մարդու իրավունքների հարցերով միջազգային համագործակցության բաժնի վարիչ Զոյա Ստեփանյան:

Գործուղման վայր և ժամկետներ՝ Բելգիայի Թագավորություն (Բրյուսել), 2025 թվականի փետրվարի 16-ից 19-ը:

Հրավիրող կողմ՝ ԵՄ Արտաքին գործողությունների եվրոպական ծառայություն:

Գործուղման նպատակ՝ Մասնակցություն Հայաստան-ԵՄ արդարադատության, ազատության և անվտանգության ենթակոմիտեի 14-րդ նիստին:

Քննարկված թեմաներ՝ Դատաիրավական բարեփոխումներին, դատական համագործակցությանը, կոռուպցիայի դեմ պայքարին, անձնական տվյալների պաշտպանությանը, իրավապահ համագործակցությանն ու կազմակերպված հանցավորության դեմ պայքարին, ապաստանին, միգրացիային և շարժունակությանն առնչվող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.

Հայաստան-ԵՄ արդարադատության, ազատության և անվտանգության ենթակոմիտեի (այսուհետ՝ Ենթակոմիտե) հայկական կողմի համանախագահ, Արդարադատության նախարարի տեղակալ Աննա Կարապետյանը նիստի ընթացքում ներկայացրել է Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի հիմնական ուղղությունները, դրա շրջանակներում կատարված աշխատանքները, մշտադիտարկումը:

Մասնավորապես՝ ներկայացվել են դատարանների ծանրաբեռնվածության նվազեցմանն ուղղված քայլերը, այդ թվում՝ նշվել է, որ գումարի բռնագանձման որոշակի խումբ գործեր փոխանցվել են նոտարներին, որից հետո հավաքագրված վիճակագրությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական դատարանների ծանրաբեռնվածությունը կրճատվել է ավելի քանի 80 տոկոսով:

Խոսվել է դատավորների աշխատավարձերի բարձրացման մասին: Ներկայացվել են թվայնացման ոլորտում ձեռնարկված քայլերը, մասնավորապես՝ քաղաքացիական դատավարության էլեկտրոնային համակարգի ներդնումը: Անդրադարձ է կատարվել նաև արդարադատության միասնական էլեկտրոնային համակարգի ներդրման խնդիրներին և դրա կապակցությամբ Եվրոպական միության հետ համագործակցությանը:

Նախարարի տեղակալը ներկայացրել է նաև Հայաստանի Հանրապետության ձեռնարկած քայլերը՝ վեճերի լուծման այլընտրանքային մեխանիզմների ներդրման ոլորտում: Անդրադարձել է «Միջազգային արբիտրաժային շաբաթ» միջոցառման կարևորությանը:

Անդրադարձ է կատարվել դատարաններում գենդերային հավասարության կապակցությամբ առկա վիճակագրությանը, Եվրոպայի Խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) հանձնարարականների կատարմանը, ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի շրջանակներում իրականացվող գնահատմանը, միջազգային իրավական

օգնության հարցերով դատավորների վերապատրաստումներին: Խոսվել է նաև դատավորների գնահատման առկա համակարգի փոփոխություններին միտված օրենսդրական նախաձեռնության, դրա կապակցությամբ Վենետիկի հանձնաժողովի կարծիք տրամադրելու վերաբերյալ:

Ներկայացվել է նաև Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական բարեփոխումների ընթացքը և հետագա քայլերը:

Խոսվել է նաև քրեակատարողական և պրոբացիայի ոլորտներում իրականացված բարեփոխումների մասին:

Արդարադատության նախարարի տեղակալը ներկայացրել է նաև անձնական տվյալների պաշտպանության ոլորտում իրականացված քայլերը, կարևորվել է «Ընդլայնված տվյալների պաշտպանություն և տվյալների հոսքեր» ծրագրի շրջանակներում 2024 թվականի հոկտեմբերին Երևան այցելած ԵՄ փորձագետի կողմից ներկայացված զեկույցը: Նախարարի տեղակալն ընդգծել է զեկույցի հիման վրա անձնական տվյալների պաշտպանության ոլորտի բարեփոխման հստակ ճանապարհային քարտեզ ունենալու անհրաժեշտությունը և կարևորել գործընթացի արդյունավետությունը՝ վիզաների ազատականացման երկխոսության տեսանկյունից: Ներկայացվել է նաև Հայաստանում իրականացվող տվյալների քարտեզագրման և դասակարգման գործընթացի, հանրային տեղեկությունների վերաբերյալ օրենսդրության փոփոխության մասին:

Ներքին գործերի նախարարությունն անդրադարձել է ոստիկանության ոլորտի, այդ թվում՝ պարեկային ծառայության բարեփոխումներին, վիզաների ազատականացման երկխոսությանը, միգրացիայի կառավարմանը, ապաստանի տրամադրման հարցերին, ինչպես նաև ներկայացրել Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության հետ փոխգործակցության ներկա վիճակը և կապի սպայի հետ կապված հարցերը, Բուդապեշտի կոնվենցիայի իմպլեմենտացիան, կիբեռանվտանգության և բնակչության պետական ռեգիստրին առնչվող օրենսդրական փոփոխությունների առկայությունը: Ներկայացվել է նաև Ոստիկանության գվարդիայի ձևավորմանն

ուղղված օրենսդրական փաթեթի ընդունման և հետագա քայլերի վերաբերյալ տեղեկությունները: Անդրադարձ է կատարվել նաև ձերբակալվածներին պահելու վայրերին, ոստիկանական համակարգում կանանց ներգրավվածությանը:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից հասցեագրվել են դատավորների և դատախազների բարեվարքության ստուգման՝ 2024թ. իրականացված աշխատանքների արդյունքները, այս ոլորտում առկա մարտահրավերները, ինչպես նաև բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության գործիքակազմի ներդրումը: Ներկայացվել է նաև, որ 2024 թվականին իրականացվել է հանրային պաշտոն զբաղեցնելու համար 336 թեկնածուների բարեվարքության ստուգում, ըստ այդմ՝ տրամադրվել է նույնքան եզրակացություն, որից 253-ը եղել է դրական, 35-ը՝ բացասական, 41-ը՝ դրական՝ վերապահումներով:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացվել են թրաֆիքինգի դեմ պայքարում ձեռնարկված միջոցները, այդ թվում՝ իրազեկման աշխատանքների և տուժողների իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Գլխավոր դատախազությունը և Քննչական կոմիտեն օրակարգային հարցերի առնչությամբ ներկայացրել են վերաբերելի գործերի քննության վերաբերյալ առկա տվյալներ, այդ թվում՝ թրաֆիքինգի և կիբեռհանցագործությունների մասով:

Ի թիվս այլնի, ներկայացվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի կիբեռհանցագործությունների և բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչությունում 2014-2021 թվականների ժամանակահատվածում քննվել է ընդհանուր՝ 1193 քրեական վարույթ, իսկ 2022-2024 թվականների ժամանակահատվածում՝ ընդհանուր 2430 քրեական վարույթ: ՀՀ քննչական կոմիտեում գործարկվել և ավելի քան 2 տարի գործում է Բուդապեշտի Կոնվենցիայի էլեկտրոնային ապացույցների ստացման համար նախատեսված 24/7 կոնտակտային կետը, որը հնարավորություն է տվել անմիջականորեն, էլեկտրոնային եղանակով հաղորդակցվել Կոնվենցիայի բոլոր պետությունների իրավապահ

մարմինների և անդրազգային ինտերնետային ծառայություններ մատուցող ընկերությունների հետ՝ էլեկտրոնային ապացուցների ստացման գործընթացում:

Արդարադատության նախարարի տեղակալ

Ստորագրող
ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
6201940685

2025-02-27 15:45:54 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Աննա Կարապետյան

26.02.2025**թ**.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը - Վահան Կոստանյան
2. Զբաղեցրած պաշտոնը – ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները – Բելգիայի Թագավորություն՝ Բրյուսել, 2025թ. փետրվարի 16-19
4. Հրավիրող կողմը – Եվրոպական միություն
5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը) – Գործուղման նպատակը ՀՀ-ԵՄ մարդու իրավունքների շուրջ երկխոսության (Երկխոսություն) հերթական՝ 14-րդ նիստին մասնակցությունն էր: ՀՀ պատվիրակությունը գլխավորում էր ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը՝ որպես Երկխոսությունը համանախագահող: ՀՀ պատվիրակության կազմում ընդգրկված էին՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Աննա Կարապետյանը, ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ Արմեն Ղազարյանը, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Նահապետյանը, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ Նունե Հովհաննիսյանը, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Քրիստինե Գաբուզյանը, Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակի Վճիռների և որոշումների կատարման վարչության պետ Անահիտ Սանթրոսյանը, ՀՀ արտաքին գործերի նախարարության Եվրոպայի վարչության Եվրոպական միության բաժնի վարիչ Լենա Թերզիկյանը, ՀՀ արտաքին գործերի նախարարության Մարդու իրավունքների հարցերով միջազգային համագործակցության բաժնի վարիչ Զոյա Ստեփանյանը և ՀՀ արդարադատության նախարարության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող Ռուբինա Մխիթարյանը: Հարկ է նշել, որ նիստին առցանց ձևաչափով մասնակցում էին նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալներ Տաթևիկ Ստեփանյանը, Աննա Ժամակոչյանը և Ռուբեն Սարգսյանը, ինչպես նաև ՀՀ փոխվարչապետի խորհրդական Աննա Գասպարյանը:

   Երկխոսության 14-րդ նիստին մասնակցող ԵՄ պատվիրակությունը ղեկավարում էր Արտաքին գործողությունների եվրոպական ծառայության Արևելյան գործընկերության երկրների հարցերով բաժնի ղեկավար Դորոտա Դլուչի-

Սուլիգան: Պատվիրակության կազմում ներառված էին Եվրոպական հանձնաժողովի Ընդլայնման և արևելյան հարևանության, Զբաղվածության, սոցիալական հարցերի և ներառականության, Միգրացիայի և ներքին գործերի գլխավոր տնօրինությունների, Արտաքին գործողությունների եվրոպական ծառայության մի շարք ներկայացուցիչներ:

Երկխոսությունը 2009թ. հիմնված ձևաչափ է և անցկացվում է տարեկան մեկ անգամ, հաջորդաբար՝ Երևանում և Բրյուսելում: Վերջինիս նախորդ՝ տասներեքերորդ նիստը տեղի է ունեցել 2024թ. հունվարի 18-ին՝ Երևանում: Երկխոսությունը պատեհ հնարավորություն է ընձեռում մասնագիտացված ձևաչափով քննարկելու մարդու իրավունքների ոլորտում ՀՀ և ԵՄ համար առաջնահերթություն ներկայացնող մի շարք հարցեր, նախանշել համագործակցության հնարավոր ուղղություններ: Մարդու իրավունքների շուրջ նման քննարկումների արդյունավետ անցկացումը կարևորվում է նաև ՀՀ-ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ երկխոսության համատեքստում:

6. Քննարկված թեմաները – Երկխոսությանը քննարկվեցին մարդու իրավունքների ոլորտի քաղաքականության զարգացումները Հայաստանում և Եվրոպական միությունում, հավասարության և խտրականության դեմ քաղաքականության, երեխաների իրավունքներին, հավաքների ազատությանը, միավորումների ու խոսքի ազատությանը, ներառյալ՝ տեղեկատվության ազատությանը, ընտրություններին, արդարադատության ու անվտանգության ոլորտներում և քրեակատարողական համակարգում մարդու իրավունքների պաշտպանությանը, աշխատանքային իրավունքներին և զբաղվածությանը, միջազգային հարթակներում համագործակցությանը վերաբերող հարցեր, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կարիքները հասցեագրելուն ուղղված ՀՀ կառավարության ջանքերը և ԵՄ աջակցությունն այս ուղղությամբ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը – Նիստը մեկնարկեց համանախագահողներ Վահան Կոստանյանի և Դորոտա Դլուչի-Սուլիգայի ելույթներով: Այնուհետև մանրամասն անդրադարձ կատարվեց վերոհիշյալ օրակարգային կետերին՝ յուրաքանչյուր գերատեսչություն ներկայացրեց իր իրավասության ներքո գտնվող ոլորտներում գրանցված զարգացումները: Յուրաքանչյուր օրակարգային կետի ներքո տեղի էր ունենում հարցուպատասխան: Նիստի օրակարգը կցվում է:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը – 2018 թվականից

ՀՀ և ԵՄ միջև ներդրվել է Գործառնական եզրակացություններ (Operational Conclusions) խորագրով փաստաթղթի ընդունման պրակտիկան: Գործառնական եզրակացությունները նիստի արդյունքները ամփոփելու և երկուստեք հանձնառություններն ամրագրելու միջոց են: Փաստաթուղթը ներկայացվում է յուրաքանչյուր նիստի ավարտին և ընդունվում է կողմերի միջև փոխհամաձայնեցմամբ: Փաստաթուղթը ներառում է մինչև Երկխոսության հաջորդ նիստի անցկացումը կողմերի համար սահմանված հստակ նպատակներ: Սույն նիստի ընթացքում ներկայացվեց գործառնական եզրակացությունների նախագիծը, որի վերջնական համաձայնեցումը և ընդունումը իրականացվելու է բոլոր շահագրգիռ գերատեսչությունների և ԵՄ հետ քննարկմամբ:

Նիստի շրջանակներում ընդունվել է համատեղ մամլո հաղորդագրություն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

– Նիստի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել պահպանել մարդու իրավունքների ոլորտում ակտիվ երկխոսությունը, այդ թվում՝ ՀՀ-ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ երկխոսության համատեքստում:

- Առարկայական երկխոսություն ծավալել ԵՄ գործընկերների հետ՝ Հայաստանին տրամադրվող աջակցության ծավալների մեծացման ուղղությամբ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

24 փետրվար, 2025

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ արտաքին գործերի նախարարություն**

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **112 - Ա**

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝
   1) Վահան Կոստանյան, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ
   2) Լենա Թերզիկյան, ՀՀ արտաքին գործերի նախարարության Եվրոպայի վարչության ԵՄ բաժնի վարիչ
   3) Զոյա Ստեփանյան, ՀՀ արտաքին գործերի նախարարության մարդու իրավունքների հարցերով միջազգային համագործակցության բաժնի վարիչ

4. Գործուղման վայրը՝ **Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել**

5. Գործուղման ժամկետները՝ **2025թ. փետրվարի 16-19**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

■ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անուն, Ազգանուն	Անուն, Ազգանուն	Անուն, Ազգանուն	**Ընդամենը** (հազ. դրամ)
		Վահան Կոստանյան	Լենա Թերզիկյան	Զոյա Ստեփանյան	
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	էկոնոմ դաս	էկոնոմ դաս	

	Ավիատոմսի արժեքը (դրամ)	460850.25	328263.6	328263.6	1,117,377.45
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (եվրո)	187.58	166.74	166.74	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	78,780.6	68,808.6	68,808.6	
	Օրերի քանակը	3	3	3	
	Ընդամենը (դրամ)	236,342	206,426	206,426	649,194
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	126	126	126	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	52,242.12	51,887	51,887	
	Օրերի քանակը	3	4	4	
	Ընդամենը (դրամ)	156,726	207,547	207,547	571,820
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար				
	Այլ ծախսեր (*նկարագրել*)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)					2,338,391.45

Գլխավոր ֆինանսիստ՝ _____ ԱԵՎԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ 24.02.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
FOR FINANCIAL TRANSACTIONS
02527728

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը **ՀՀ արդարադատության նախարարություն**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի փետրվարի 10-ի թիվ 112-Ա որոշման**
3. Անունը, ազգանունը, **զբաղեցրած պաշտոնը ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Աննա Կարապետյանը և ՀՀ արդարադատության նախարարության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող Ռուբինա Մխիթարյանը** *(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)*
4. Գործուղման վայրը **Բելգիայի Թագավորություն (Բրյուսել)**
5. Գործուղման ժամկետները **2025 թվականի փետրվարի 16-19-ը**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ **ՀՀ պետական բյուջե**

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը-
ճանապարհածախս,գիշերավարձ
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլ
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☒ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		**Աննա Կարապետյան**	**Ռուբինա Մխիթարյանը**	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	Էկոնոմ դաս	Էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	218,375	218,375	436,7
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	206 եվրո	206 եվրո	

	Վճարը 1 օրվա համար (դրամ)	84,746	84,746	
	Օրերի քանակը	3	3	
	Ընդամենը (դրամ)	206,500,82 (3*206€=618€*411,39 դրամ= 254,239դրամ, որի 60%=152,543.40դրամ (500,22€*412,82դրամ =206,500,82 դրամ Տարբերությունը 53,957.40	206,500,82 (3*206€=618€*411,39դրամ= 254,239դրամ, որի 60%=152,543.40 դրամ (500,22€*412,82 դրամ=206,500,82 դրամ Տարբերությունը 53,957.40	413,0
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	126	126	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	51,835	51,835	
	Օրերի քանակը	4	4	
	Ընդամենը (դրամ)	207,340.56	207,340.56	414,7
Այլ ծախսեր				
	Մուտքի արտոնագրի վճար			
	Այլ ծախսեր (*Սպասարկում ՊՊ սրահում*)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		632,216.38	632,216.38	1,264,4

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԷԴԳԱՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ Ո Ի Ն

1. Մարմնի անվանումը — ՀՀ ՆԳՆ
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը — ՀՀ վարչապետի 10.02.2025 թ. թիվ 112-Ա որոշում
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

   ՀՀ ՆԳՆ տեղակալ Արմեն Ղազարյան
4. Գործուղման վայրը — **Բելգիայի Թագավորություն ք,Բրյուսել**
5. Գործուղման ժամկետը — 16.02.2025թ-19.02.2025թ.
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսեր
(ճանապարհածախս,օրապահիկ, գիշերավարձ,)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցվող տարբերակը)

ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն (**հաշվարկը կատարված է ԿԲ 11.02.2025թ-ի կուրսով՝ 1€=409.11դր.)**

Ծախսի տեսակը		**Արմեն Ղազարյան**	**Ընդամենը դրամ**
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	Էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	**442686**	**442686**
Գիշերա վարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	165.32 €	
	Վճարը 1 օրվա համար (դրամ).	67634.06	
	Օրերի քանակը	3	
	ընդամենը (դրամ)	**202902.18**	**202902.18**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	126 €	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	51547.86	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	**154643.58**	**154643.58**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (ապահովագրություն)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**800232**	**800232**

ՀՀ ՆԳՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2023թվականի մարտի 23-ի
N 326-Ն որոշման
Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018թվականի սեպտեմբերի 19-ի
N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ քննչական կոմիտե
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ վարչապետի N 112-Ա որոշում առ 10.02.2025թ
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
Արթուր Նահապետյան - ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ
(թվարկել պատվիրակություն գործուղելու դեպքում)
4. Գործուղման վայրը Բելգիայի Թագավորություն (Բրյուսել)
5. Գործուղման ժամկետները 2025թվականի փետրվարի 16-19-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը 2025թ-ի ՀՀ քննչական կոմիտեի բյուջեով արտասահմանյան գործուղումների համար նախատեսված ծախսեր-1180-11001
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

■ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Արթուր Նահապետյան*	Ընդամենը (դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	Էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	329,965.0	329,965.0
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով, EUR)	166.74	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	68,831.9	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	206,495.8	206,495.8
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով EUR)	126.0	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	51,835.1	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	207,340.6	207,340.6
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (նկարագրել)		
Ընդամենը ծախսեր (դրամ)		743,801.4	743,801.4
Նախահաշվարկով վճարված (դրամ)		689,849.0	689,849.0
Վճարման ենթակա (դրամ)		53,952.4	53,952.4

Ծանոթություն- 12.02.2025թ. ՀՀ ԿԲ արտարժույթի միջին փոխարժեք՝ 1ԵՎՐՈ = 411.39դրամ

Ծանոթություն-24.02.2025թ. ՀՀ ԿԲ արտարժույթի միջին փոխարժեք՝ 1ԵՎՐՈ = 412.81դրամ

Գլխավոր քարտուղար՝ Կ.Մարգարյան
/Գլխավոր ֆինանսիստ /

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը **ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը - **ՀՀ վարչապետի N 112-Ա որոշում**
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

_____

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը- **Բելգիայի Թագավորության Բրյուսել քաղաք**
5. Գործուղման ժամկետները **17.02.2025-19.02.2025թթ.**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

_____

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		**Տիգրանուհի Խալանդան**	*Անուն, ազգանուն 2*	*Անուն, ազգանուն 3*	*Անուն, ազգանուն …*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)					
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	332927				**332.93**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	199.24				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	82248				82.25
	Օրերի քանակը	2				2
	Ընդամենը (դրամ)	164496				**164.5**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	126				126
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	52014				52.01
	Օրերի քանակը	3				3

	Ընդամենը (դրամ)	156042				**156.04**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (*նկարագրել*)					
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**653.465**				**653.47**

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԿՈՅԱՆ**

24.02.2025թ

01. 06. 01. 02 ՀՀ Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում

h/h 900001004077

Գործուղումների և շրջագայության ծախսեր

4222 հոդված-արտասահմանյան պաշտոնական գործուղումների գծով ծախսեր

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հ112-Ա 10.02.2025թ. ՀՀ Վարչապետի որոշում

2.1. Գործուղման մասին իրավական ակտի համ ՆՀ 9 -Ա 11.0.2025թ. 16-18.02.2024թ. Բելգիս Թագավորություն / Բրյուսել /

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) ԿԸՀ նախագահի տեղակալ - Ն. Հովհաննիսյանի

Ծախսի տեսակը		Անուն,ազգանուն / ԿԸՀ նախագահի տեղակալ - Ն. Հովհաննիսյան /	Ընդամենը վճարման ենթակա գումար (հազ. դրամ)	Վերահաշվարկ / ԿԸՀ նախագահի տեղակալ - Ն. Հովհաննիսյան /	Ընդամենը ենթակա է ետ վերադարձման / ԿԸՀ նախագահի տեղակալ - Ն. Հովհաննիսյան /
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը **Էկոնոմ դաս**				
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	388661	388661		
	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով EUR/	206		150.49	
	Վճարը 1 օրվա				

Գիշերավարձ	համար (դրամ)	84746.34	0	62102.71	
	Օրերի քանակը	2		2	
	Ընդամենը (դրամ)	169492.68	169492.68	124205.42	45287.26
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով- EUR/	126			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	51835.14		0	0
	Օրերի քանակը	3			
	Ընդամենը (դրամ)	155505.42	155505.42	0	0
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար /բժշկական ապահովագրություն/	1600	1600		
	Մուտքի արտոնագրի վճար	15000	15000		
	Այլ ծախսեր *Ավիատոմսի ամրագրման համակարգի սպասարկման ծառայություն*	19433	19433		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**749692.10**	**749692.10**	**124205.42**	**45287.26**

Նախնական հաշվարկ	12.02.2025թ.ՀՀ ԿԲ կողմից 1-EUR/ -ի նկատմամբ ՀՀ դրամի հաստատված փոխարժեքը՝	**Ընդամենը ծախսեր**	**749692**	**124205**	**45287**
		(ՀՀ դրամ)			
Վերահաշվարկ	21.02.2025թ.ՀՀ ԿԲ կողմից 1-EUR/ -ի նկատմամբ ՀՀ դրամի հաստատված փոխարժեքը՝				

Կատարող
Ֆինան.-ն վարչության պետ Մ. Մելքոնյան
Հեռ. 56-31-28

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՁՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը - Վարչապետի աշխատակազմ
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը - Վարչապետի 2025 թվականի փետրվարի 10-ի N 112 - Ա
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Անահիտ Սանթրոսյան - Գրասենյակի վճիռների և որոշումների կատարման վարչության պետ

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
4. Գործուղման վայրը - Բրյուսել, Բելգիա
5. Գործուղման ժամկետները - 2025 թվականի փետրվարի 16-18
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անահիտ Սանթրոսյան*	*Անուն, ազգանուն 3*	*Անուն, ազգանուն ...*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ			
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	374,282			
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	150,49 եվրո			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)				
	Օրերի քանակը	2			
	Ընդամենը (դրամ)				
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	եվրո			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	126 եվրո			
	Օրերի քանակը	3			
	Ընդամենը (դրամ)				
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար				
	Այլ ծախսեր (*նկարագրել*)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)					

Ստորագրությունը, ամսաթիվը: 20.02.2025թ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ դատախազություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ գլխավոր դատախազի հրաման 8/114-Ա
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
Քրիստինե Արայի Գաբուզյան ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
4. Գործուղման վայրը Բելգիայի Թագավորություն՝ քաղաք Բրյուսել
5. Գործուղման ժամկետները 2025 թվականի փետրվարի 16-ից մինչև փետրվարի 19-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)
ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)
□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Քրիստինե Գաբուզյան	*Անուն, ազգանուն 2*	*Անուն, ազգանուն 3*	*Անուն, ազգանուն ...*	**Ընդամենը**
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս				
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	264 481				264 481
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	166 74 Եվրո				500 22 Եվրո
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	68 832				206 495
	Օրերի քանակը	3				
	Ընդամենը (դրամ)	206 495				206 495
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	126 Եվրո				504 Եվրո
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	51 548				206 192
	Օրերի քանակը	4				
	Ընդամենը (դրամ)	206 192				206 192
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի					

	արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (*նկարագրել*)					
Ընդամենը ծախսեր						677 168

* Եվրո փոխարժեքը (ԿԲ) 409.110 << դրամ: (60%)
* Եվրո փոխարժեքը (ԿԲ) 412.810 << դրամ:
*Վճարվել է 622371 (վեց հարյուր քսաներկու հազար երեք հարյուր յոթանասունմեկ) << դրամ:
* Վճարման ենթակա գումարը կազմում է 54 797 (հիսունչորս հազար յոթ հարյուր ինսունյոթ) << դրամ:

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ **Վ.Հովհաննիսյան**